ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՏԻԿՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊՈՏՍԴԱՄԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

(1945 թ. հուլիսի 17 - օգոստոսի 2)

Երկրորդ աշխարհամարտի ավարտական փուլում հաղթող տերությունների միջև սկիզբ առան տարաձայնություններն ու հակասությունները: Արդեն չկար նախկին համերաշխությունը, և կողմերից յուրաքանչյուրը, գերագնահատելով հաղթանակի հարցում իր ներդրումները, ձգտում էր հնարավորին չափ ընդարձակել իր ազդեցության շրջանակները: Թեև երեք տերությունների ղեկավարները արդեն Թեհրանում և Յալթայում ընդգծել էին իրենց շահերի շրջանակները, այնուամենայնիվ օրաձին խնդիրները գնալով բարդվում էին՝ վերածվելով հակամարտության առանցքի:

Այս պայմաններում, երբ ԱՄՆ և Անգլիան գաղտնի և բացահայտ բանակցում էին տարբեր երկրների հետ, ձգտում նեղացնել Արևմտյան Եվրոպայում ԽՍՀՄ-ի տարածման շրջանակները, երբ առկա էին եթե ոչ խզման, ապա թշնամական մթնոլորտի ձևավորման նախադրյալներ, երբ, ԽՍՀՄ կարծիքով, համագործակցության նշաններ ցույց չէին տալիս անգլո-ամերիկյան հարաբերությունները, այդ խառն իրավիճակն օգտագործելու մտայնությամբ ասպարեզ բերվեց Հայկական հարցը, որը խորհրդային կողմին հաջողության հասնելու ոչ մի երաշխիք չէր խոստանում:

Անգլիան և ԱՄՆ-ը հարթելով վեճերն ու անհամաձայնությունները՝ ԽՍՀՄ ծավալապաշտական ծրագրերի առթիվ հստակեցրին իրենց տեսակետերը և մինչ աշխարհը կդողդար Ճապոնիայում պայթող ատոմային ռումբերի սարսափից, ավելի պարզորոշ դարձրին ԽՍՀՄ նոր պահանջների նկատմամբ տեսակետերը, որոնք հանգում էին Արևելքում Ռուսաստանի դեմ թուրքական պատնեշը ամեն կերպ պաշտպանելու նպատակին:

Այս առթիվ հիշատակության է արժանի ԱՄՆ պետքարտուղարի պարտականությունները կատարող հանձնակատար Ջ. Կ. Գրյուի 1945 թ. հունիսի 18-ի գրությունը, որտեղ խոսելով բրիտանական գործերի հավատարմատար (նախարար) Ջոն Բալյուի հետ հանդիպման մասին, տեղեկացնելով խորհրդային կառավարության պահանջները՝ գրում է. «Ելնելով անգլո-թրքական պայմանագրի դրույթներից՝ բրիտանական կառավարությունը առաջարկում է պաշտպանել թրքական դիրքորոշումները»: Ավելին, մտահոգ լինելով այն հարցում, որ ԱՄՆ առայժմ, մինչև Մեծ եռյակի հանդիպումը չի բացահայտի իր տեսակետը, ապա բրիտանական կողմը հույս ունի, «որ մենք գոնե մեր որոշ գործողություններով կսատարենք բրիտանական գործողություններին»[1]:

1 «Դաշնակից երեք տերությունների ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ղեկավարների Բեռլինի

Համագործակցությունը անկասկած իրականանալու էր, որովհետեւ թե՛ Անգլիան, թե՛ ԱՄՆ իրենց ուրույն տեսակետերն ունեին Թուրքիայի նկատմամբ: Ահավասիկ մեջբերենք 1945 թ. հունիսի 29-ին ԱՄՆ՝ Թուրքիայի առթիվ մշակված քաղաքականությունից առավել կարեւոր հատվածները. «Թուրքիայի աշխարհագրական դիրքն այնպիսին է, որ պատմականորեն ինչպես Մեծ Բրիտանիան, այնպես էլ ԽՍՀՄ-ը նախանձով վերաբերվել է այլ երկրների հետ Թուրքիայի բարեկամությանը: Թուրքիան պոտենցիալ մրցասպարեզ է ԽՍՀՄ-ի եւ Մեծ Բրիտանիայի միջեւ դիվանագիտական, տնտեսական ու ռազմական կոնֆլիկտների համար: Բրիտանական քաղաքականության հիմքը, հավանաբար պետք է լինի Թուրքիային աջակցելն ու հզորացնելը, որպեսզի կարողանա ավելի հաջող դիմակայել Թուրքիան սովետական ուղեծրի մեջ ներգրավելու փորձերին:

Թուրքիայի արտաքին քաղաքականության նավը դանդաղ արեւելքից արեւմուտք էր թեքվում: 1921-1936 թթ. երբ թե՛ Թուրքիայի հանրապետությունը, թե՛ Սովետական Միությունը նորաստեղծ, անորոշ եւ միայնակ պետություններ էին, նրանք մի շարք ընդհանուր խնդիրներ ունեին, եւ Թուրքիան դիվանագիտորեն թեքվում էր դեպի ԽՍՀՄ-ը: 1936-1939 թթ. Թուրքիան՝ ոգեւորված Մոնտրեում իր ունեցած հաջողությամբ, սկսեց քիչ թե շատ անկախ դիրքորոշում զբաղեցնել մեծ տերությունների նկատմամբ: 1939 թ. Թուրքիան վախեցած էր գերմանասովետական ջերմ հարաբերությունների փաստից եւ որոշակիորեն իր քաղաքականությունը թեքեց արեւմտյան ուղղության՝ միության դաշինքներ ստորագրելով Անգլիայի եւ Ֆրանսիայի հետ:

Արդեն կան հստակ նախանշաններ այն բանի, որ Խորհրդային Միությունը մի շարք լուրջ հարցեր է պատրաստել, որոնք վերաբերում են Թուրքիային եւ թուրքերին, որոնք, ինչպես եւ այլ ազգերը, մեծ հույսով հավատում են, որ իրենց անկախությունն ու ամբողջականությունը պաշտպանվելու են Անվտանգության միջազգային կազմակերպության (ԱՄԿ) սկզբունքների հիման վրա: Թուրքերը հավատում էին, որ իրենք ապահով կլինեն, եթե ԱՄԿ-ի ընդունած սկզբունքները հարգվեն եւ իրագործվեն Անվտանգության Միության անդամների կողմից:

Եթե ԱՄԿ-ն անհաջողություն կրի (թուրքերն այդ առումով հոռետեսորեն են տրամադրված), նրանց ինչպես Արեւելքի, այնպես էլ Արեւմուտքի կողմից ճնշողական քաղաքականության դժվարին շրջան է սպասվում: Այդ դեպքում կառավարության (ԱՄՆ) համընդհանուր խաղաղություն ապահովելու շահերի տեսանկյունից, Թուրքիայի համար նախընտրելի է թվում կա՛մ հստակ դաշինքներ ունենալ երկու ուղղություններով, կա՛մ ընդհանրապես դաշինքներ չունենալ:

Պետությունների ղեկավարների հանդիպմանը այդ կառավարությունը (ԱՄՆ) պետք է հստակ հայտարարի, որ ինքը չի կարող եւ չի պատրաստվում լռել, եթե որեւէ երկիր միջոցներ ձեռնարկի, որոնք կսպառնան Թուրքիայի անկախությանն ու ամբող-

(Պոտսդամի) կոնֆերանսը», փաստաթղթերի ժողովածու, Երեւան, 1989, էջ 45:

ջականությանը, եւ ուստի կիսախտեն ԱՄԿ-ի սկզբունքները: Ավելին, հարմար պահի դեպքում այդ կառավարությունը (ԱՄՆ) պետք է հստակ ներկայացնի Թուրքիայի կամ որեւէ այլ հետաքրքրված պետության դիրքորոշումը»[2]:

Գրեթե նույնաբովանդակ կարծիք ուներ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Վիլսոնը. «Մոլոտովի առաջադրած հարցերը սկզբնական քայլ են այն բազմամասշտաբ կամպանիայի, որը դուրս է գալիս Թուրքիայի սահմաններից...

Կարսը եւ Արդահանը հետ վերադարձնելու պահանջը պետք է լուրջ ընդունվի: Նախկինում ցարական կարգերի ունեցածը վերականգնելու հարցը ներկայիս խորհրդային կառավարության համար հեղինակության հարց է: Բացի դրանից, այդ տարածաշրջանը կարեւոր ռազմավարական նշանակություն ուներ հյուսիսային Իրանին եւ Արեւելյան Անատոլիային մոտենալու տեսանկյունից»[3]:

Առավել հանգամանալից էր դեսպան Վիլսոնի տեղեկատվությունը 1945 թ. հուլիսի 3-ին Թուրքիայի վարչապետի Սարաջօղլուի հետ հանդիպման մասին. «Երեկ ես հանդիպեցի Սարաջօղլուի՝ փոխնախարարի հետ: Նա ասաց. «Դուք եւ Բրիտանիան շատ խնդիրներ ունեք: Մենք՝ թուրքերս միայն մի խնդիր ունենք, բայց մեզ համար դա կյանքի ու մահու հարց է: Եթե Միությունը փորձում է դեմ գնալ մեր անկախությանը, մենք կկռվենք: Դա կարող է անհույս լինել կամ ոչ, բայց մենք ամեն դեպքում կկռվենք»: Այնուհետեւ նա ասաց, որ ԱՄՆ-ն ու Բրիտանիան, ԱՄՆ-ն նույնիսկ ավելի շատ քան Բրիտանիան, որոշել են, թե ինչպես է զարգանալու աշխարհը: «Միությունը գժվել է. Այն համաշխարհային իշխանություն է երազում: Նրանք շատ վայրերում են առաջ անցել ձեզնից ու Բրիտանիայից. Բորնհոլմ, Տրիեստ, Ալբանիա, Հունաստան, Թուրքիա, Իրան: Հենց որ նրանք թույլ տեղ են գտնում, օգտագործում են այն: Նրանք կորցնելու բան չունեն: Եթե մի պահ դիմադրեք, նրանք ժամանակավորապես կթողնեն այդ հարցը: Բայց երբ հարցը կրկին առաջ գա, նրանք նորից կանդրադառնան դրան: Նման պայմաններում հնարավոր չէ սովորական կյանքով ապրել երկրում: Թուրքիան միայն ուզում է, որ իրեն հանգիստ թողնեն մեր ընկերային եւ տնտեսական հարցերը լուծելու համար: Մենք ոչ ոքի համար վտանգ չենք ներկայացնում: Մենք շատ ենք ուզում բարեկամական հարաբերություններ ունենալ Ռուսաստանի հետ, եւ արել ենք ամեն հնարավոր բան, որպեսզի հասնենք դրան: Մենք ամբողջությամբ պատրաստ ենք քննարկելու նեղուցների մասին կոնվենցիաները: Նեղուցների միջով անցնելու հարցն առավելապես հուզում է ծովային պետություններին, քան մեզ: Մեր աշխատանքը մեր տարածքի պաշտպանությունն է: Մենք չենք ընդունում խորհրդային իշխանությունը»:

Հետո նա ասաց. «Դուք եւ Բրիտանիան հոժարակամ փորձում եք աշխարհում կարգուկանոն եւ տնտեսական կայունություն վերահաստատել: Միությունը հակառակն է անում: Նրանք ամենուր հանգեցնում են անկարգության եւ կասկածի: Նրանք փորձում են քաոս ստեղծել, որից հույս ունեն օգուտ քաղել»:

2 “Армения и советско-турецкие отношения в дипломатических документах 1945-1946гг.”, национальный архив Армении, под редакцией Армана Киракосяна, Ереван, 2010, с. 249-250.

3 Անդ, էջ 251:

Նա հույս ունի, որ Մեծ Եռյակի հանդիպումը կկարողանա որոշել Արեւելքի եւ Միջին Արեւելքի ապագան առաջիկա մի քանի տարվա համար: Եթե ԱՄՆ-ն ու Բրիտանիան չկարողանան ուժեղ դիրք զբաղեցնել, եթե հանդիպումից հետո ԽՍՀՄ-ը նորից Թուրքիայի առջեւ տարածաշրջանային հարցեր առաջադրի, այդ դեպքում Արեւելքի եւ Միջին Արեւելքի այլ ազգերը կհամոզվեն, որ Ստալինի տեսանկյունը նորից հաղթեց, եւ կսկսեն պայքարել նրա հետ՝ առավել լավ պայմաններ ձեռքբերելու, եւ ողջ այդ տարածաշրջանը կհայտնվի խորհրդային իշխանության ներքո»[4]:

Թուրքիան, զգալով պահի լրջությունը, ցուցաբերելով համբերություն, ոչ թե ԽՍՀՄ-ի դեմ պայքարում իր անկարողությունն էր արտահայտում, այլ բացառապես նպատակ ուներ հակամարտության մեջ ներքաշել Անգլիային, եւ ԱՄՆ-ին՝ քաջ գիտակցելով, որ նրանք երբեք թույլ չեն տա ԽՍՀՄ-ի ընդարձակումը դեպի Միջերկրական ծով: Պայքարելու, արյուն թափելու հայտարարությունները տեղ գտան նաեւ Ջ. Կ. Գրյուի հետ 1945 թ. հուլիսի 7-ին թուրք դեսպանի հանդիպման ժամանակ. «Թուրքիան անմիջապես կսկսի կռվել...»:

Թուրքիան նույնիսկ մտահոգություն էր արտահայտում, որ Սան-Ֆրանցիսկոյում ձեռք բերված խաղաղության, համագործակցության գաղափարները կոչնչանան: Միակ երաշխիքը, որ կբացառվի պատերազմն ու խաղաղության կորուստը, կախված է ԱՄՆ-ից, որի «ուժեղ հակազդեցությունը» ԽՍՀՄ-ին կստիպի հրաժարվել ուժ գործադրելուց[5]:

Թուրքական դիվանագիտությունը աշխատում էր օրն ի բուն, այցելություններ կատարում տարբեր երկրներում ԱՄՆ-ի, Անգլիայի դեսպաններին, թակարդներ լարում, իր անձնատվության մասին ակնարկներ անում, միայն թե այս անգամ էլ կարողանար պահպանել զավթած տարածքները: Այդ բովանդակությունն ուներ նաեւ Միացյալ թագավորությունում ԱՄՆ դեսպանին այցելած Թուրքիայի ԱԳ նախարար Սակի մեղրածոր, հաճոյախոսություններով զրույցը, որն ավարտվեց նորամուծությամբ, երբ հիշյալ երկրներին անվանելով դաշնակից, բարեկամ, ակնարկում էր աջակցություն, որպեսզի մեղմացվի «սպառնական բնույթի իրավիճակը»[6]:

Բերված փաստերը վկայությունն են այն իրողության, որ դաշնակիցների միջեւ ամբողջ պատերազմի ընթացքում երբեք չիրականացավ փոխըմբռնման, վստահության իրավիճակ. յուրաքանչյուր կողմ, ունենալով հեռուն գնացող նպատակներ, ջանք չէր խնայում ժամանակ շահելու հարցում, որպեսզի առավել հստակեցվեն հակասությունների բեւեռները, որն էլ առավելագույնս պարզորոշ կդարձներ հակառակորդ կողմի ծրագրերը:

Այս տեսակետը հաստատվեց կառավարությունների ղեկավարների հուլիսի 17-ի խորհրդակցության բացման նիստից հետո, երբ մինչեւ 1945 թ. հուլիսի 22, ժամը 1707

4 Անդ, էջ 252-253:
5 Անդ:
6 Անդ, էջ 255-256:

-ին սկսվեց վեցերորդ նիստը, որտեղ քննության առնվեց նաեւ Հայկական տարածքների հարցը:

Նախագահող Հ. Տրումենը հայտնում է, որ հաջորդ հարցը Սեւծովյան նեղուցների խնդիրն է, եւ ձայնը տալիս է Ու. Չերչիլին: Վերջինս իր ավանդական երկարաշունչ նախաբանից հետո հայտնում է, որ ինքը տեղյակ է թե՛ Մոլոտովի ու թուրք դեսպանի հանդիպման, թե՛ նեղուցների ու Թուրքիայի արեւելյան սահմանների փոփոխման մասին, ուստի ցանկանում է իմանալ «ինչպիսին է խորհրդային կառավարության դիրքը այս հարցի վերաբերյալ»[7], եւ հիշեցնում. «Միաժամանակ եւ ինձ թույլ եմ տալիս գեներալիսիմուսի ուշադրությունը հրավիրել այն բանի կարեւորությանը, որ Թուրքիային չվախեցնեն»[8]:

Արդեն իսկ պարզ էր, որ Անգլիան, ԱՄՆ համաձայնությամբ, պաշտպանության տակ էր առնում Թուրքիային: Նման դիրքորոշումը, բնական է, ենթադրելու էր ԽՍՀՄ քաղաքականության փոփոխություն, բայց ոչ առաջ քաշված հարցից հրաժարում, այսինքն՝ քննարկում հենց քննարկման համար, քանզի դաշնակիցները արդեն բացահայտ հայտնում էին, որ դեմ են խորհրդային կողմի պահանջներին:

Թերեւս նման իրադրության պատճառով էր, որ Ստալինը հրաժարվեց խոսքից՝ առաջարկելով ձայն տալ Մոլոտովին: Գրեթե կրկնելով Իդենի հետ հանդիպման ժամանակ արված բացատրությունները՝ Մոլոտովն այս անգամ կատարում է նորամուծություն. «Դաշնակցային պայմանագիր կնքել նշանակում է, որ մենք պետք է համատեղ պաշտպանենք մեր սահմանները. ԽՍՀՄ-ը կպաշտպանի ոչ միայն իր սահմանը, այլեւ թուրքականը, իսկ Թուրքիան՝ ոչ միայն իր սահմանը, այլեւ խորհրդային սահմանը: Սակայն որոշ մասերում ԽՍՀՄ-ի եւ Թուրքիայի միջեւ եղած սահմանը մենք համարում ենք անարդարացի: Իսկապես, Խորհրդային Հայաստանից եւ Խորհրդային Վրաստանից Թուրքիան տերիտորիա պոկեց. Դա Կարսի, Արտվինի ու Արդահանի մարզերի հայտնի տերիտորիան է (ընդգծումը - Հ. Զ.): Ահա Թուրքիայի պոկած տերիտորիայի քարտեզը (հանձնում է քարտեզը): Այդ պատճառով էլ ես հայտարարեցի՝ դաշնակցային պայմանագիր կնքելու համար պետք է կարգավորել Վրաստանից եւ Հայաստանից պոկած տերիտորիայի հարցը՝ այդ տերիտորիան վերադարձնել նրանց»[9]:

Տեսնում ենք, որ Մոլոտովի նախորդ բանակցությունների եւ հանդիպումների ժամանակ չէր արծարծվել Վրաստանի խնդիրը: Հարցը ունի եռակի պատասխան: Նախ՝ ԽՍՀՄ դեմ էր Հայկական հարցի բարձրացմանը եւ այն օգտագործում էր նեղուցների հարցում թուրքերի վրա ճնշում գործադրելու տեսանկյունից: Երկրորդ՝ թերեւս խորհրդային կողմն արդեն հանգել էր վերջնական եզրակացության, որ խնդիրն ընդհանրապես անլուծելի է: Երրորդ՝ խորհրդային կողմը թերեւս նկատի ունենալով, որ հայկական հողերի հարցը հնարավոր է լուծվի, մտադրվել էր բաժին հանել նաեւ

7 «Դաշնակից երեք տերությունների ...», էջ 167:
8 Անդ:
9 Անդ, էջ 168:

Վրաստանին, եւ չորրորդ՝ մեջտեղ բերելով Վրացական խնդիրը՝ խորհրդային կողմը ցանկանում էր ձախողել նաեւ Հայկական հարցը:

Ենթադրությունները իրական հիմքեր ունեն:

Այսպես, 1945 թ. դեկտեմբերի 20-ին «Правда» թերթում տպագրվեց Ս. Ջանաշիայի եւ Ն. Բերձենիշվիլու «Թուրքիայի նկատմամբ մեր ունեցած օրինական պահանջների մասին» հոդված-նամակը, որտեղ Արդահանը, Արդվինը, Օլթին, Սպերը, Բայբուրթը (Բաբերդ), Գյումաշխանեն, Արեւելյան Լազիստանը համարվում էր վրացական տարածք[10]: Նման բովանդակությամբ «Խորհրդային Վրաստանի 25-ամյակը» վերնագրով, Վրաստանի ԿԿ քարտուղար Կ. Չարքվիանիի ստորագրությամբ նոր հոդված տպագրվեց նույն ,Правда» թերթում, 1946 թ. փետրվարի 25-ին:

Ամենայն հավանականությամբ վրաց պատմաբաններին նման հանձնարարություն տվել է անձամբ Ստալինը, որպեսզի ավարտին հասցներ հայկական պատմական հողերը Վրաստանին բռնակցելու իր կիսատ թողած ծրագիրը[11]:

Վրացական կեղծարարության դեմ պատասխանի միտում ուներ ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Ա. Ջեվելեգովի «Հայաստան եւ Թուրքիա» դասախոսությունը, որը նա կարդաց 1946 թ. փետրվարի 20-ին ԽՍՀՄ ժողկոմխորհին կից բարձրագույն դպրոցում, ընդգծելով որ Հայաստանից խլված տարածքների վերադարձը արդարացի է, հայ ժողովրդի պահանջը օրինական:

1945 թ. հոկտեմբերի 25-ին ՄԱԿ քաղաքական կոմիտեում ԽՍՀՄ ներկայացուցիչ Ա. Վիշինսկին պատվեր կատարելով՝ սատար էր կանգնում վրացական պահանջներին, որը զայրույթ առաջացրեց ամերիկահայության շրջանում:

1945 թ. նոյեմբերի 25-ին ամերիկահայությունն ստիպեց խորհրդային դիվանագետին հանդիպում կազմակերպել իր ներկայացուցիչների հետ եւ պարզաբանում տալ: Ա. Վիշինսկին դիմեց դիվանագիտական հնացած զենքին, հայտարարելով, թե թերթերը աղավաղել են իր մտքերը, որ ինքը երբեք նշված շրջանները չի անվանել վրացական:

Հայ ժողովրդի շահերի պաշտպանի դերում հանդես եկավ Կ. Գամսախուրդիան. «Մենք ոչ ոքի թույլ չենք տա մեր միջեւ կոտորած սկսել... Մենք մինչեւ վերջին շունչը կկանգնենք մեր երկու ժողովուրդների շահերի ու մշակույթի պաշտպանության դիրքերում»[12]:

Թուրքական կառավարությունը, որ հետեւում էր իրադարձությունների զարգացմանը, հանդես եկավ սեփական շահերի պաշտպանությամբ: 1946 թ. հունվարի 7-ին եւ 10-ին վարչապետ Շուքրա Սարաջօղլին հանդես եկավ ելույթով, որտեղ ներկայացրեց պատմական «իրականությունը»՝ փորձելով հաստատել, թե Առաջին աշխարհամարտից հետո, հակառակ թերթերի հրապարակումների, նշված շրջանները կցվել են Թուրքիային այն ժամանակ, երբ Ռուսաստանը թույլ էր: Սակայն իրականում «Խոսքն այն

10 “Правда”, 20 XII 1945.
11 Տե՛ս “Армения...”, էջ 32:
12 К. Гамсахурдия, Сбор. Соч., т. 7, Тбилиси, 1981, с. 501.

մասին է, որ բնակչությունն ինքը համաձայնեց, որպեսզի այդ շրջանները վերամիավորվեն հայրենիքին»[13]: Ինչ մնում է Ռուսաստանի թույլ լինելու խնդրին, ապա «Թուրքիան գտնվում էր Ռուսաստանից առավել թույլ վիճակում»[14]:

Անդրադառնալով վրաց ակադեմիկոսների հոդվածին՝ վարչապետը հայտնում է, որ իրոք այդ տարածքներում կան մարդիկ, որոնք խուսափելով ցարական հետապնդումներից, հանգրվան են գտել իրենց «նոր հայրենիքում»: «Վրաց գաղթականները մեծ խմբերով տեղավորվեցին Թուրքիայում, եւ այդուհետ նրանք շարունակեցին խոսել վրացերեն լեզվով»[15]:

Այնուհետեւ նա բերում է վրաց բնակչության քանակի մասին տեղեկություններ, մերժում պրոֆեսորների տարածած լուրերը վրացիների սպանության մասին եւ ավելացնում. «Ինչպես երեւում է այդ վրացի պրոֆեսորները չգիտեն ո՛չ անցյալի, ո՛չ ներկա պատմությունը»[16]:

Բրիտանական վերլուծական դեպարտամենտի 1946 թ. ապրիլի 4-ին կազմած տեղեկանքում նշվում է. «...Երկու վրացի գիտնականները չեն ցուցաբերում մեծ համեստություն, երբ ասում են, թե վրացական տարածքները հասնում են մինչեւ Տավրոսյան լեռներ: Հավակնությունը այն մասին, որ Վրաստանը տարածվում էր այդպես հեռու դեպի հարավ, թվում է, պատմականորեն չի արդարացվում»:

Բերված վկայությունները, մերժելով նշված տարածքների վրացական պատկանելությունը, հիմնավորում են գիտության հաստատած՝ ազգերի պատմական անցյալի մասին տեսակետները: Վարչապետի եւ անգլիական վերլուծաբանական կենտրոնի եզրակացությունները զոնե այս առումով մոտ են պատմական ճշմարտությանը:

Ահա այսպիսի խառնիճաղանջ կեցության մեջ էր հայտնվել Հայկական հարցի նոր դրսեւորումը, որը, բնական է, դրական արդյունք չէր արձանագրելու:

1945 թ. հուլիսի 23-ին գումարվում է երեք ղեկավարների յոթերորդ նիստը: Քննարկման դրված մեկ տասնյակ հարցերի շարքում էր նաեւ հայկական, այժմ արդեն հայկական ու վրացական տարածքների խնդիրը: Ստալինը, թուրքերին վախեցնելու Չերչիլի մեղադրանքը բացառելուց հետո, անդրադառնում է Կարսի եւ Արդահանի խնդիրներին եւ ավելացնում, որ եթե թուրքերը դեմ են սահմանները ճշգրտելու խորհրդային առաջարկին, «ապա վերանում է դաշինքի հարցը»[17]:

Նույն նիստում նախագահող Տրումենը, կարծես ամփոփելով քննարկված հարցերը, անդրադարձավ նաեւ հայկական տարածքների խնդրին եւ հստակեցնելով ԱՄՆ դիրքորոշումը՝ հայտնեց. «Ինչ վերաբերում է տերիտորիայի հարցին, ապա այն վե-

13 “Армения...”, с. 100.
14 Անդ:
15 Անդ, էջ 101:
16 Անդ:
17 Անդ, էջ 184:

բաբերում է միայն Խորհրդային Միությանը եւ Թուրքիային եւ պետք է լուծվի նրանց միջեւ»[18]:

Այդուհետ փարածքների խնդիրը այլեւս չքննարկվեց, թեեւ 1945 թ. հուլիսի 23-ին ԱԳ նախարարների նիստում որոշվեց կառավարությունների ղեկավարների քննարկմանը ներկայացնել օրակարգ, որի հարցերից մեկն էլ վերաբերում էր Թուրքիային:

Այսպիսով, հերթական անգամ բարձր ատյան բարձրացված Հայկական հարցը գրեթե նշանակալի, նոր, վճռական ձեւակերպում չստացավ, այն սոսկ տեղեկատվական բնույթի հարցի վերածվեց, հարց, որի լուծման շուրջն այս անգամ կանգնել էին այն տեղեկությունները, որոնք արդեն երկու դար շարունակ շահարկում եւ ի վնաս հայ ժողովրդի էին լուծում նրա օրինական պահանջը:

Փոխվում էին ժամանակները, սակայն չէին փոխվում կարծրացած դիրքորոշումները, որոնք այժմ արդեն նոր կերպարանավորում էին ստացել՝ «Թուրքիո արեւելյան սահմանները Միացյալ նահանգներու սահմաններն են»: Տրումենյան ձեւակերպումը շարունակեց խորանալ ու նոր իմաստ ընդունել, որովհետեւ իր փարածքում սառը պատերազմ անվանյալի բարիկադներ էր կառուցել Թուրքիան եւ առատորեն վարձատրվելով՝ վերածվում էր ԽՍՀՄ-ի դեմ ռազմական կարեւոր հենակետի:

18 Անդ, էջ 186: